



ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ  
Մամլո հաղորդագրություն

## Հայաստանում ընտրությունները ցուցաբերում են առաջընթաց-«ասում են դիտորդները»

ք. ԵՐԵՎԱՆ, 13 մայիսի, 2007թ.: Այսօր համատեղ հայտարարության մեջ Հայաստանում մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունները դիտարկելու նպատակով ժամանած Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը հանգել է այն եզրակացությանը, որ ընտրությունները նախորդ ընտրությունների նկատմամբ բարելավում ցուցաբերեցին և մեծամասամբ անցկացվեցին միջազգային պարտավորություններին համապատասխան, չնայած այն հանգամանքի, որ դեռևս մնում են չհասցեագրված որոշ խնդիրներ:

Առաքելությունը գովել է Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քայլերը՝ լուրջ թերությունները, այդ թվում՝ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները հասցեագրելու ուղղությամբ: Ընտրարշավն աշխույժ անցավ, որը լայնորեն լուսաբանվել է լրատվական միջոցներով: Ընտրությունների օրը հանգիստ անցավ՝ առանց մեծ քանակով կատարված միջադեպերի, սակայն դիտարկվել են կեղծիքների համակարգերի մի քանի դեպքեր: Որոշ ընթացակարգային բնույթի խնդիրներ են առաջ եկել քվեների հաշվման և ամփոփման ընթացքում, ինչպես նաև դիտումնավոր կեղծումների առանձին դեպքեր:

Մոտ 100 խորհրդարանական և 300 կարճաժամկետ դիտորդ է հետևել ընտրությունների ընթացքին, որոնք ներկայացնում են ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովը՝ ԵԱՀԿ ԽՎ, Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովը՝ ԵԽ ԽՎ, և Եվրոպական խորհրդարանը՝ ԵԽ:

«Այս ընտրություններում հստակ կերպով բարելավում էր նկատվում և սա լավ է Հայաստանի ժողովրդավարության կայացման համար», - ասաց Թոնե Թինսգորդը՝ կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգողը և ԵԱՀԿ ԽՎ փոխնախագահը: «Այժմ, լրացուցիչ աշխատանք է անհրաժեշտ այս երիտասարդ ժողովրդավարությունը էլ ավելի ամրապնդելու համար: Դա կպահանջի բոլոր քաղաքական ուժերի համատեղ ջանքերը և կամքը: Հուսով եմ, որ դրան ականատես կլինենք հետագա տարիների ընթացքում»:

«Մենք շնորհավորում ենք Հայաստանի ժողովրդին՝ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու կամքը ցուցաբերելու ուղղությամբ: Որոշ խնդիրներ դեռևս մնում են, ինչպիսիք են՝ քաղաքական և գործարար շահերի միահյուսված լինելը և անհրաժեշտ է բարեփոխել ընտրական բողոքների վարման ընթացակարգը», - ասաց Լեո Պլատվոն՝ ԵԽ ԽՎ պատվիրակության ղեկավարը:

«Մասնակցելով այս ընտրություններին, Հայաստանի քաղաքացիները կատարեցին մեկ քայլ առաջ դեպի եվրոպական ժողովրդավարական արժեքներ, ինչպես նախատեսված է

և խրախուսվում է ԵՄ Հարևանության քաղաքականությամբ: ԵԽ պատվիրակության անդամները խրախուսում են, որպեսզի Հայաստանի քաղաքացիները շարունակեն այս ուղղությամբ՝ հեռանկարում ունենալով առաջիկա նախագահական ընտրությունները», - նշեց Մարի Անն Իզլեդ Բեգյան՝ ԵԽ պատվիրակության ղեկավարը:

«Հուսով եմք, որ այս ընտրությունները կնպաստեն ընտրական գործընթացների նկատմամբ ընտրողների վստահության վերականգնմանը», - եզրափակեց դեսպան Բորիս Ֆոլեցը՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ առաքելության ղեկավարը: «Սակայն, այս ընտրությունները դեռ չեն ավարտվել: Մենք շարունակելու ենք հետևել հետընտրական զարգացումներին. և միայն այն բանից հետո երբ դրանք եզրափակվեն, մենք կունենանք ամբողջական պատկերը»:

Ընտրական մարմիններն ընդհանուր առմամբ աշխատեցին արդյունավետ կերպով և լավ պատրաստված էին ընտրությունների օրվան: Առաջին անգամ առկա էր կենտրոնացված և համակարգչային ընտրողների ռեսզիստր: Ընտրական օրենսգրքում վերջին փոփոխությանների արդյունքում կանանց ներգրավվածությունն ավելացել է, ըստ որի կանայք պետք է կազմեն յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի ցուցակում առնվազն 15 տոկոսը:

Իր հայտարարության մեջ առաքելությունը նշել է, որ պետության և իշխող կուսակցության տարանջատումն այդքան ակնհայտ չէր քարոզարշավում:

Առկա են մտահոգություններ՝ այդ թվում բացեր ընտրությունների կանոնակարգող իրավական դաշտում, անհամապատասխանություններ և իրավական հակասություններ: Դեռ ավելին՝ իշխանությունները դանդաղ էին գործում կամ արձագանքող չէին ընտրական գործընթացների անկանոնություններն ուղղելու հարցում:

Կլաս Բերգմանն, ԵԱՀԿ ԽՎ, հեռ.: +374 93 733 292, [klas@oscepa.dk](mailto:klas@oscepa.dk)

Ուրդուր Գուննարսոդոտտիլ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, հեռ.: +374 93 732 723, [urdur@odihr.pl](mailto:urdur@odihr.pl)

Բաս Զլեյն, ԵԽ ԽՎ, հեռ.: +374 91 458 948, [bas.klein@coe.int](mailto:bas.klein@coe.int)

Պիետրո Դուչի, Եվրոպական խորհրդարան, հեռ.: +374 94 711 828

[pietro.ducci@europarl.europa.eu](mailto:pietro.ducci@europarl.europa.eu)